

**ԳՈՂԱՐ ՀԱԿՈՒՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ  
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՉ**

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը չի սահմանում բժշկական գաղտնիքի հրապարակման հստակ հիմքեր և պայմաններ, ինչպես նաև դրանց գնահատմանն ուղղված չափանիշներ: Իր հերթին, քրեական օրենսգիրքը միայն նշում է, որ արգելվում է բժշկական գաղտնիքի հրապարակումն «առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության»: Հիշյալ եզրույթը խիստ խնդրահարույց է ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարթություններում: Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել առանձնացնել բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության որոշ հիմքեր, առաջարկել հրապարակման իրավաչափության պայմանները, դրանց գնահատման չափանիշները, ինչպես նաև տարբերակել հիմքերը պայմաններից:

*Հիմնարարներ- բժշկական գաղտնիք, հրապարակել, անհրաժեշտություն, իրավաչափություն, հիմքեր, պայմաններ:*

Ինչպես ցանկացած ոչ բացարձակ արժեք, բժշկական գաղտնիքը ևս տեղի է տալիս, երբ մրցակցող շահը գերակայում է: Պետության և օրենքի խնդիրն է ապահովել, որ բոլոր սահմանափակումները համապատասխանեն որոշակի երաշխիքների: Այլ կերպ՝ եթե կոնֆիդենցիալության իրավունքից բացառություններն անխուսափելի են, դրանք գոնե պետք է հստակ սահմանված լինեն, որպեսզի յուրաքանչյուր պացիենտ նախօրոք իմանա, թե ինչ ակնկալել:

ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի տեքստի վերլուծությունից հետևում է, որ հանցավոր է բժշկական գաղտնիքի ոչ թե ցանկացած, այլ միայն «առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության» հրապարակումը: Որևէ իրավական ակտ, այնուամենայնիվ, հիշյալ եզրույթի հստակ նշանակությունը չի բացահայտում: Այսինքն, նման անհրաժեշտության մեկնաբանությունն ու գնահատումն օրենսդիրն ամբողջությամբ թողել է իրավական պրակտիկային: Սակայն, հաշվի առնելով, որ քննարկման առարկա հանցակազմի նախատեսումից մինչ օրս որևէ քրեական գործ այդ հոդվածով չի հարուցվել, այն հանգամանքների շրջանակը, որոնք կազմում են «մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտություն», շարունակում է մնալ չափազանց անորոշ: Մինչդեռ, քննարկվող հանցակազմի գործնական կիրառության համար հիշյալ եզրույթի բացահայտման նշանակությունը չի կարելի թերագնահատվել: Հավանական է, որ տվյալ հոդվածով երբևէ գործ չի հարուցվել հենց այն պատճառով, որ իրավապահ մարմինները չգիտեն, թե ինչ չափանիշներ պետք է ընկած լինեն բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության գնահատման հիմքում՝ իրավական բացի պատճառով: Ուստի, չափազանց

կարևոր է, որպեսզի օրենքը նախատեսի գաղտնիքի հրապարակման հիմքերի գոնե ուղենշային ցանկ, ինչը հնարավոր կդարձնի քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված բլանկետային դիսպոզիցիայի նպատակային կիրառումը: Սույն հոդվածի շրջանակում փորձ է արվում առանձնացնել բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության որոշ հիմքեր, առաջարկել հրապարակման իրավաչափության պայմանները, դրանց գնահատման չափանիշները, ինչպես նաև տարբերակել հիմքերը պայմաններից:

Ստորև ներկայացված է մասնագիտական գրականության, արտասահմանյան երկրների օրենսդրության և հայրենական իրավակիրառ պրակտիկայում բժշկական գաղտնիքի հրապարակման ամենահաճախ հանդիպող առանձին դեպքերի վերլուծությունը:

*Բժշկական հաստատության պատշաճ աշխատանքը.* բժշկական գաղտնիքի հրապարակումը կարող է արդարացված լինել այն հիմքով, որ ժամանակակից բժշկական հաստատությունում անխուսափելի է պացիենտի վերաբերյալ տեղեկության տրամադրումը բազմաթիվ մասնագետների՝ այլ, պացիենտի հետ անմիջապես չաշխատող բժիշկներ, հոգեթերապևտներ, հաշվապահներ, ընդունարանի աշխատակիցներ, բժշկական համալսարանների ուսանողներ և այլն: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո խորհրդապահության խախտումը կարող է անհրաժեշտ լինել գերակայող հանրային շահի պատճառով, այն է՝ հիվանդանոցների արդյունավետ աշխատանքը, որը պահանջում է, որ համապատասխան տեղեկություններն ու փաստաթղթերը մատչելի լինեն յուրաքանչյուր աշխատակցի համար, ով իր պարտականություններն իրականացնելու համար դրանց ծանոթանալու կա-

www.journal.lawinstitute.am

րիք ունի: Գաղափարը նրանում է, որ վերոգրյալ մասնագետներից յուրաքանչյուրին գաղտնի տեղեկությունները մատչելի լինեն միայն անհրաժեշտ չափով: Ինչ վերաբերում է ուսանողներին, եթե պացիենտն իր համաձայնությունը չի տալիս, նրանց հետ գաղտնի տվյալներ կիսելը կլինի խախտում՝ ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ քրեական օրենսգրքի իմաստով, քանզի, որպես կանոն, անհրաժեշտ չէ: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԳ) իր Կանոնադրված ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով վճռում ոչ իրավաչափ է համարել առանց կնոջ համաձայնության բժշկական ուսանողների ներկայությունը նրա ծննդաբերությանը<sup>2</sup>:

Հարցումները ցույց են տալիս, որ պացիենտները հիմնականում չեն մտահոգվում, եթե իրենց վերաբերյալ տվյալները տրամադրվում են այլ բժիշկների, սակայն մտահոգվում են հիվանդանոցի վարչակազմին՝ դրանք տրամադրելու պարագայում<sup>3</sup>: Հարց է առաջանում, կարո՞ղ է արդյոք գաղտնիք կազմող տեղեկությունը տրամադրվել այլ բժշկական անձնակազմին կամ վարչակազմին, եթե պացիենտն ուղղակիորեն դեմ է դրան: Մի կողմից, ՄԻԵԳ-ը իր վճիռներից մեկում ընդգծել է, որ բժշկական գաղտնիքի պաշտպանության ուղղությամբ դրական առաջընթաց կարող է լինել համապատասխան տվյալների մատչելիության սահմանափակումը միայն այն մասնագետներով, որոնք անմիջականորեն ընդգրկված են պացիենտի օգնությանը կամ սպասարկմանը<sup>4</sup>: Մյուս կողմից, ներկայացված դիրքորոշումն արտահայտվել էր այնպիսի իրավիճակի համատեքստում, որտեղ բժշկական տվյալների շտեմարանի մատչելիությունը որոշ մասնագետների կողմից օգտագործվել էր այդ տվյալների ոչ օրինաչափ և ոչ անհրաժեշտ տարածման նպատակով: Իսկ այն դեպքերում, երբ տվյալներն այլ մասնագետների հետ կիսելն անհրաժեշտ է պացիենտին արդյունավետ բժշկական օգնություն կամ սպասարկում տրամադրելու համար, կարծում ենք՝ ամբողջությամբ տեղավորվում են ՄԻԵԳ՝ «անհրաժեշտություն» եզրույթի մեկնաբանության շրջանակում: Ընդ որում, ըստ անհրաժեշտության (on «need to know» basis) պացիենտի վերաբերյալ որոշ տվյալներ այլ բուժաշխատողների հետ կիսելը կարող է բխել ոչ միայն հենց նրա շահերից, այլև ծառայել առողջապահական համակարգի կայունության և արդյունավետ գործունեության շահին: Ամեն դեպքում, սա պետք է որ չնվազեցնի բժշկական գաղտնիքի պաշտպանության մակարդակը, քանի որ մյուս բուժաշխատողները և սահմանափակված են խորհրդապահության պարտականությամբ:

Այլ է իրավիճակը վարչակազմի և օժանդակ անձնակազմի պարագայում: Պացիենտները դժկամությամբ են համաձայնվում իրենց անձնական

տեղեկությունները կիսել ոչ բժշկական անձնակազմի հետ: Խնդիրը լուծելու համար Սիեզլերն առաջարկում է քննարկվող խնդիրը լուծել որոշակի վարչատեխնիկական միջոցներով: Օրինակ, կարելի է պացիենտի վերաբերյալ տվյալների ողջ շտեմարանը բաժանել մի քանի հատվածների՝ բուն բժշկական, ֆինանսական և այլն՝ այդպիսով բժշկական տեղեկությունների մատչելիությունն ապահովելով միայն բժշկական անձնակազմի համար: Առաջարկին դեմ չլինելով հանդերձ, պետք է նշել, որ այն հազիվ թե ամբողջական լուծում տա քննարկման առարկա խնդրին: Այսպես, երբ անձը մտնում է բժշկական հաստատություն, առաջին հերթին ստիպված է լինում պատասխանել ընդունարանի աշխատակցի հարցերին և որոշակի փաստաթղթեր լրացնել նրա ներկայությամբ, ինչի հետևանքով այդ աշխատակցին հայտնի են դառնում մի շարք անձնական և բժշկական տվյալներ ոչ միայն պացիենտի, այլև երբեմն նրա ազգականների մասին: Ամենաքիչը, ոչ բժշկական անձնակազմը, այդ թվում՝ շտապ օգնության դիսպետչերը, շտապ օգնության մեքենայի վարորդը և այլն, տեղյակ են լինում պացիենտի կողմից բուժօգնության դիմելու փաստի և առողջական խնդրի բնույթի մասին: Նույնը կարելի է ասել հեռախոսով կամ էլեկտրոնային միջոցներով հիվանդանոցում գրանցվելու մասին: Պացիենտների վստահությունը բարձրացնելու և բժշկական գաղտնիքի առավել լայն պաշտպանություն ապահովելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել, որ վերոգրյալ անձանց կողմից բժշկական գաղտնիքի հրապարակումը ևս հանգեցնում է քրեական պատասխանատվության: Նրանց համար, ովքեր, այնուամենայնիվ, բժշկական գաղտնիքի հրապարակման հանցակազմի սուբյեկտ համարվել չեն կարող, քրեական օրենսգրքում պետք է նախատեսվի հատուկ հանցակազմ՝ ուղղված մասնագիտական կամ ծառայողական գաղտնիքը հրապարակելուն:

*Քրեակատարողական հիմնարկներում պատիժը կատարելու նպատակով հրապարակումը* ընդհանուր առմամբ քրեակատարողական համակարգում դատապարտյալների բժշկական գաղտնիքի իրավունքը գրեթե չի պաշտպանվում: Գործնականում բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրվում են քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, բոլոր սուբյեկտներին, որոնք իրավասու են հսկողություն իրականացնելու պատժի կրման պայմանների նկատմամբ և ծանոթանալու դատապարտյալի անձնական գործին՝ դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը որոշող անկախ հանձնաժողովի անդամները և այլն: Բացի այդ, ազատությունից զրկված անձանց բժշկական օգնություն ցույց տվող անձնակազմը կազմված է քրեակատարողա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան ծառայության ծառայողներից, ինչը նշանակում է, որ նրանք, սուբորդինացիայի կանոններից ելնելով, պարտավոր են իրենց ղեկավարներին տրամադրել ծառայությանն առնչվող ցանկացած տեղեկություն: Բացի այդ, բժիշկների՝ քրեակատարողական ծառայողներ լինելը հաճախ խոչընդոտում է նրանց և դատապարտյալների միջև վստահության վրա հիմնված հարաբերությունների ձևավորմանը՝ պայմանավորված բանտային ենթամշակույթի առանձնահատկություններով: Ի հավելումն, քիչ չեն նաև դեպքերը, երբ բժշկական հետազոտությունը կատարվում է վարչակազմի ներկայացուցչի ներկայությամբ: Այս խնդրին անդրադարձ է կատարվել ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի հայեցակարգում, որն ընդգծում է, որ պետք է հստակ ամրագրել բժշկական ծառայությունների մատուցման գաղտնիությունն ապահովող օրենսդրական պահանջներ, և որ բժշկի կողմից կալանավորված անձի կամ դատապարտյալի հետազոտումը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի տեսողական և լսողական դիտարկումից դուրս: Նման մոտեցումը միանգամայն ընդունելի է թվում. անհրաժեշտ է սահմանել, թե՛ վերոնշյալ սուբյեկտներից ով ինչ նպատակով և ինչ տեղեկությունների ծանոթանալու իրավասություն ունի, իսկ մնացած դեպքերում՝ կանխել գաղտնիքի հրապարակումը:

*Փորձաքննությանը ստացված տվյալների գաղտնիություն.* Հաջորդ հարցը, որ ենթակա է քննարկման սույն հոդվածի համատեքստում՝ փորձաքննությունների ընթացքում բժիշկ-փորձագետների կողմից ստացված տեղեկությունների գաղտնիության հարցն է: Այսպես, եթե բժիշկը հանդես է գալիս փորձագետի կամ մասնագետի կարգավիճակում, որպես կանոն բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականությունն ի սկզբանե բացակայում է, քանզի նրա գործունեությունը որպես կանոն՝ ուղղված է որևէ վարույթի կամ այլ գործընթացի համար ապացույց ձեռք բերելու նպատակին: Այդ իրավիճակում փորձաքննության ենթարկվողը (եթե գործ ունենք կենդանի անձի փորձաքննության հետ) ի սկզբանե տեղյակ է, որ իր վերաբերյալ տեղեկությունները հրապարակվելու են և անգամ կարող են օգտագործվել իր դեմ, ուստի կարող է իր իրավունքները և շահերը պաշտպանել օրենքով չարգելված միջոցներով: Բացի այդ, նրա և փորձագետի միջև հարաբերությունները հիմնված չեն վստահության վրա (առանձին բացառությունները մի կողմ դնելով), որը կարող է խաթարվել հրապարակման դեպքում:

Այնուամենայնիվ, եթե փորձաքննության ընթացքում փորձագետին հայտնի են դառնում տեղեկություններ, որոնց վերաբերյալ հարցադրումներ նրան առաջադրված չեն եղել և որոնք կապված չեն տվյալ վարույթի հետ (օրինակ՝ անձնական բնույթի

տեղեկություններ), դրանք կհամարվեն գաղտնիք, որը հրապարակելու համար պետք է վրա հասնի քրեական պատասխանատվություն<sup>6</sup>: Իսկ եթե ձեռք բերված տեղեկությունները կապված են վարույթի հետ, սակայն դրանց վերաբերյալ փորձագետին հարցեր առաջադրված չեն եղել, ապա հարցը պետք է լուծվի ըստ վերաբերելի ճյուղային օրենսդրության: Օրինակ՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի՝ փորձագետը պարտավոր է եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով: Ինչ վերաբերում է բժիշկների կողմից մասնագետի կարգավիճակում հանդես գալուն, ապա պետք է նախ և առաջ պարզել, թե արդյոք տվյալ գործունեությունը համարվում է բժշկական օգնություն կամ սպասարկում՝ ըստ «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության եվ սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի թիվ 276 որոշման: Օրինակ՝ նույն քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գնությունն այդպիսին չի համարվում, ուստի նշված քննչական գործողությանը մասնակցելիս բժիշկը չի կարող դիտվել քննարկվող հանցակազմի սուբյեկտ: Նրա կողմից իրեն հայտնի դարձած տվյալները հրապարակելիս կառաջանա քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը:

Գրականության մեջ քննարկվում են նաև այլ նպատակներ, որոնք կարող են արդարացնել բժշկական գաղտնիքի հրապարակումը, օրինակ՝ *հետազոտական և կրթական գործունեությունը, դատափորձագիտական գործունեությունը և այլ հիմքեր*:

Ամփոփելով բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության հիմքերի և պայմանների վերաբերյալ վերլուծությունը՝ հարկ է ընդգծել հետևյալ դիտարկումները՝

1. Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության պայմանները պետք է հստակ սահմանվեն օրենքով (խոսքը, բնականաբար, գնում է ոչ թե քրեական օրենսգրքի, այլ հատուկ բժշկական գաղտնիքի մասին օրենքի): Ընդ որում, օրենքը չպետք է սահմանափակվի միայն հրապարակման նյութական հիմքը, ասել է թե՛ նպատակն ընդգծելով, այլ պետք է մանրամասնի այն պայմանները և չափորոշիչները, որոնց բացակայությունը հրապարակումը կդարձնի ոչ իրավաչափ, անգամ՝ օրինաչափ նպատակի առկայության պարագայում: Կենտրոնական տեղն այստեղ պետք է զբաղեցնեն հրապարակման անհրաժեշտությունը գնահատող չափորոշիչները: Միևնույն ժամանակ,

հարկ է ընդգծել, որ օրենքով հրապարակման հիմքերի սպառնիչ ցանկ նախատեսելը նպատակահարմար չէ:

2. Քրեական օրենսգիրքը պետք է հրաժարվի «առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության» եզրույթից, որը խիստ խնդրահարույց է: Առաջինը, այդ ձևակերպմամբ գաղտնիքի հրապարակման միակ պայման է նախատեսվում անհրաժեշտությունը, որն, անխոս, պետք է համարվի գլխավոր պայմանը, բայց ամեն դեպքում ոչ միակը: Բացի այդ, դուրս են մնում անհրաժեշտության այն տեսակները, որոնք չեն համարվում մասնագիտական կամ ծառայողական, հատկապես, որ տառացի մեկնաբանությամբ ծառայողական անհրաժեշտություն կարող են ունենալ միայն զինված ուժերում կամ քրեակատարողական ծառայությունում ծառայող բժիշկները: Երկրորդը, քննարկվող ձևակերպման տառացի մեկնաբանությունը հանգեցնում է մի անհեթեթ իրավիճակի. ստացվում է, որ անգամ եթե պացիենտն իր համաձայնությունն է տվել հրապարակման համար, սակայն առկա չէ հրապարակման համար մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտություն, հրապարակումը կլինի հանցավոր: Այնուհաստի, որ օրենսդրի կամքն ուղղված չէ նման մեկնաբանությանը հենց միայն այն պատճառով, որ բժշկական գաղտնիքի հրապարակման հանցակազմը նախատեսված է «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ» գլխում: Սա նշանակում է, որ բժշկական գաղտնիքի պաշտպանության առաջնային նպատակն անձի անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանությունն է: Հետևաբար, պացիենտը, որպես գաղտնիքի սուբյեկտ, պետք է իրավունք ունենա այն տնօրինելու իր կամքին համապատասխան: Այս վերլուծությունից անմիջականորեն բխում է, որ բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության հիմքերից առաջինը պետք է լինի չափահաս և գործունակ պացիենտի տեղեկացված համաձայնությունը: Ընդ որում, համաձայնությունը պետք է առկա համարել նաև այն դեպքերում, երբ պացիենտը նման համաձայնություն տվել է նախօրոք՝ մինչև բժշկական զննություն անցնելը՝ օրինակ՝ աշխատանքային կամ սպահովագրության պայմանագրով:

3. Վերը մատնանշված խնդիրները լուծելու նպատակով արդարացված է թվում քրեական նոր օրենսգրքի նախագծում «հրապարակելն առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության» եզրույթի փոխարինումը «ապօրինի հրապարակելը» եզրով, որն ընդգրկում է ինչպես գաղտնիքի հրապարակման հիմքերին, այնպես էլ պայմաններին չհամապատասխանելը: Բացի այդ, վերոգրյալ ձևակերպման պարագայում տվյալ

դրույթի մեկնաբանությունը հիմնականում կախված կլինի ճյուղային օրենսդրությունից, ինչն ավելի հատուկ է բլանկետային դիսպոզիցիաներին:

4. Վերը թվարկված հիմքերից գատ, օրենքը պետք է ընդգծի իրավաչափ հրապարակման հետևյալ պայմանները՝

4.1. հրապարակումը պետք է լինի անհրաժեշտ, այսինքն՝

ա) այն նպատակը, որի համար գաղտնիքը հրապարակվում է, պետք է գերակայի գաղտնիքը պահպանելու շահի նկատմամբ,

բ) այդ նպատակին հասնելը պետք է հնարավոր չլինի առանց գաղտնիքի հրապարակման,

գ) հրապարակումը պետք է լինի միայն անհրաժեշտ չափով. ոչ օրինաչափ պետք է համարել տեղեկությունների այն մասի հրապարակումը, որոնք անհրաժեշտ չեն առաջնայնություն ստացած նպատակը նվաճելու համար.

4.2. գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են հաղորդվել միայն կոնկրետ իրավիճակում դրանց ծանոթանալու իրավասություն ունեցող սուբյեկտներին: Նման իրավասություն չունեցող անձանց տեղեկությունների դիտավորյալ տրամադրումը, անգամ իրավաչափության մյուս պայմանների առկայությամբ, կհամարվի հանցագործություն.

4.3. բոլոր դեպքերում, երբ պացիենտն ի վիճակի է, նրան բժշկական օգնություն կամ սպասարկում տրամադրելուց առաջ պետք է տեղեկացնել բժշկական գաղտնիքի սահմանների մասին:

<sup>1</sup> St'u, Sabine Michalowski, *Medical Confidentiality and Crime*, Ashgate Publishing Limited, 2003, էջ. 21:

<sup>2</sup> St'u, ECtHR, *Konovalova v Russia*, Application no. 37873/04, 09.10.2014.

<sup>3</sup> Jonathan Herring, *Medical Law and Ethics*, 5th edition, Oxford University Press, 2014, էջ. 233:

<sup>4</sup> St'u, ECtHR I v Finland, Application no. 205113, 17.07.2008, §62.

<sup>5</sup> St'u, Mark Siegler, "Confidentiality in Medicine: A Decrepit Concept" in Helga Kuhse and Peter Singer (eds), *Bioethics: An Anthology*, 2nd edition, Blackwell Publishing, 2006, էջ. 599:

<sup>6</sup> St'u, Папеева К.О., *Институт медицинской тайны как объект уголовно-правовой охраны*, Нижний Новгород, 2006, С. 189-190:

Гоар Акопян

Аспирант кафедры уголовного права юридического факультета Ереванского государственного университета

#### РЕЗЮМЕ

*Относительно некоторых вопросов касающихся законодательного регулирования оснований и условий правомерного разглашения медицинской тайны*

Действующее законодательство Республики Армения не предусматривает четких оснований и условий для правомерного разглашения медицинской тайны, а так же критерий для их оценки. В свою очередь, уголовный кодекс только обозначает, что медицинская тайна не может быть разглашена "без профессиональной или служебной необходимости". Но данное понятие крайне противоречиво как в теоретическом, так и в практическом смыслах. В рамках данной статьи мы попытались выделить некоторые основания правомерности разглашения медицинской тайны, предложить условия правомерного разглашения, критерии для оценки правомерности, а так же различить основания правомерного разглашения от условий.

*Ключевые слова:* медицинская тайна, разглашение, необходимость, правомерность, основания, условия.

Gohar Hakobyan

Ph.D. student at Criminal Law Chair,  
Law Department, Yerevan State University

#### SUMMARY

*On certain issues regarding the legislative regulation of grounds and conditions of lawful medical secrecy disclosure*

The current legislation of the Republic of Armenia does not provide for precise grounds and conditions for medical secrecy disclosure or assessment criteria thereto. In its turn, the Criminal Code only highlights the unlawfulness of the disclosure with no "professional or official need". This notion is highly problematic on both theoretical and practical levels. Hence, the present article is aimed at suggesting certain grounds for lawful disclosure of medical secrecy, conditions of legitimacy and the assessment criteria thereto as well as separate the grounds of lawful disclosure from the conditions.

*Keywords:* medical secrecy, disclosure, necessity, legitimacy, grounds, conditions.